

ՏՊԱԳՐՈՒԹԷՄՆ

ԶՈՐՍՀԱՐԻՒՐԱՄԵՆԱԿԸ,

Եթէ շինք սխալում սոյն տարւայ հոկտեմբեր ամսին է, որ պէտք է տօնւի հայկական տաղադրութեան 400 ամեայ յորելեանը:

Սա, իհարկէ, մի արտասովոր, մի եզակի տօն, մի դեռ չհղած երևոյթ պէտք է համարել հայ ժողովրդի պատմութեան մէջ: Կարելի է ասել, որ տօնւում է հայ մաքի, հայ կուլտուրայի փառաւոր ու լուսաւոր տօնը, որի հանդէպ անշուշտ ամեն մի գիտակից, ամեն մի դազափարսեան անհատ իր դրսիքը կը խոնարհի և խորին ակնածութեամբ կ'փերարերէ դէպի մի տօն, մի յորելեան, որ դարաւոր շարքաշութեան ու դժւարութիւնների անմայր պատմութիւնն ունի իր յեակը... Չորս հարիւր տարի...

Մի բուսէ, ընթերցող, երեւակայութեանդ մէջ մի յետագարձ հայեացք նշքր զէպի այդ երկար անցեալը, մըտածիր, խորհիր և տես թէ քնչ եղած կլինինք մենք չորս հարիւր տարի արանից առաջ, երբ զեռ չկար տպագրութիւն ստածդ, երբ զեռ գոյութիւն չունէր Փուտաէնթերգեան բարիքը մեր, հայերիս մէջ...

Մինչդեռ ուրիշ ազգեր գիտութեան ու լուսատրութեան ձամբան բռնած նսանդուն ու կրակոտ աշխատանք էին սկսել այդ տպագրութեան շնորհիւ, մենք խոր քուն մտած, գալարելով անթափանց խաւարի անյայտ մթութեան մէջ զեզկուում էինք անգիտակ ու անզգայ...

Եւ ահա Փուտաէնթերգի գիւար գալիս է կամաց-կամաց ցրելու այդ խաւարը, զէպի լոյս սաաշնորգիւում մեզ եւ, զէպի գիտութեան լոյսը, առանց որի պատմութեան քննից շատ ու շատ մեծ ու փոքր ազգեր ջրացիւ, անճեռ կորել են առանց մի հետք անգամ թողնելու իրենց յետեից...

Մենք այսօր տմենայն վատաւութեամբ մեզ դատում ենք եւրոպական լուսաւոր ազգութիւնների շարքը և պարծենում զբանով: Եւ իրաւունք էլ ունինք, որովհետև ամբողջ չորս դարու, չորս հարիւր տարւայ սեփական տպագրութեան, մտքի ստեղծագործութեան պատմութիւն ունինք, որ և պէտք է յաւերժացնենք մի պանծալի, մի փառաւոր և նամագրային ու նամագրովորական լուսաւոր չորսհարիւրամեայ յորելեանով: «Համագրային» խօսքը չպէտք է կարծել թէ գաւազան երկրների մի քանի մեծ քաղաքներում ապրող հայութեանն է փրաքերում, ինչպէս լինում էր սովորաբար վերջին տարիների յորելեանների և տոների ժամանակ: Թշ: Համագրային տոն ստելով մենք հասկանում ենք այնպիսի մի տօն, այնպիսի մի յորելեան, որի մէջ կմասնակցեն վերջին աղքատից ու տղէտ-անգիտակցից սկսած մինչև մեծատունը և գիտակից ինտելլիգենտը, որի մէջ կմասնակցի նաև մինչև այժմ մոռացած հարիւր հազարաւոր հայ աշխատաւոր ու քրտնաջան բուն ժողովուրդը, հայ գիւղացիութիւնն ու քանուրօթիւնն, առանց որոնց ազգ գոյութիւն չունի և չի էլ կարող ունենալ... Միայն այս ժողովուրդն է, որ կայանալիք յորելեանին մի եզակի բնաւորութիւն կըտայ, միայն սա է, որ կհամաժողովրդականացնի և կհամագրայնացնի ու փայլ կտայ առաջիկայ յորելեանին...

Վերջին տասնամեակում մանաւանդ մենք, ուսանալիքս, մի շարք գրողների, գերասանների, հասարակական հիմնարկութիւնների և գործիչների յորելեաններ տօնեցինք: Այդ յորելեաններից շատերը մենք հաշակում էինք համագրային և ժողովրդական: Որ մի հասարակական հիմնարկութեան, մի գրողի, մի գործչի յորելեանն էլ վերաբերելով ընդհանուր ազգութեանը, համագրային է և ժողովրդական, այդ որ և է կասկածից դուրս է, բայց... Բայց եկէք ու տարաբաղդարար տեսէք, որ նրանք լոկ անւամբ էին այդպէս անւանուած, որ ոչ մի ընդհանուր կապ չկար այդ յորելեանների և ժողովրդի միջև, այլապէս ինչով բացատրել այն հանգամանքը, որ ժողովրդի մի նոժ գանգաւոր, ճնշող մեծամասնութիւնը տեղեկութիւն անգամ չունի կատարւած տօների ու յորելեանների մասին... Ապա հարցրէք-օրինակի համար—Փանձակի, երեսնի, Բագրի և այլ նահանգների հարիւր հազարաւոր հայ գիւղացիներից մէկն ու մէկին, թէ ինչ էր, օրինակ, արանից մի քանի տարի առաջ տօնւած հայ թատրոնի յիսնամեակը, թէ ինչ էր Կ. Ն. Բարեգործական ընկերութեան երեսնամեակը, թէ ինչ էր այս ինչ գրողի, դրամատուրգի կամ դերասանի գրական, հասարակական կամ թատերական գործունէութեան յորելեանը, նա ձեզ, ուսերը վեր քաշելով, դառն ժպիտով և ցաւալի նկատմամբ միմիայն մի պատասխան կտայ «ես, պարոնայք, ոչ մի քանից խաբար չունիմ»... Սա բուն հայ ժողովրդի, ազիտութեան ճիրաններում գալարւող աշխատաւոր ժողովրդի արագիկական ճիշն է, նրա ցաւալի ճակատագիրը, նրա թշուառութեան ամբողջ պատմութիւնը...

Շարքարունի

ՏԻՈՒՐ Է ՊԱՏԿԵՐԸ

Ամեն անգամ երբ հայեացք ենք ձրգում մեր հասարակական կեանքի վրայ, միշտ մի արուր գգոցմունք հասկում է մեր սիրտն ու հոգին, որովհետև անմխիթար բան շատ ենք տեսնում այնտեղ:

Տարիներ անցնում են տարիների և տեից և վատ սովորութիւններն են միայն ժառանգութիւն մնում մեզ: Մոակումով նկատում ենք գիւղական ժողովուրդի քարոյական անկումը, տեսնում ենք թէ ինչպիսի ալլատեումն է